ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
«ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-10/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՐԱՏԱՊ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

19.08.2021թ.
Ժամը 16^{00}

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲ վարչության պետի տեղակալ Ա. Մուրադյանը,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲ վարչության ԶԲՖԿԾ պետ Ա. Պապյանը,
ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲ վարչության ԶԲ բաժնի գլխավոր մասնագետ Վ. Մելքոնյանը,
Գնումները համակարգող՝ ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 3-րդ բաժնի պետ Ա. Սահակյանը:

«ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-10/2» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա.Սահակյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-10/2» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկի հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-10/2» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակցին ընտրված ճանաչելու որոշման մասին.
5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ.
6. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ա. Սահակյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար զինվորական մահճակալի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-10/2» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/հ	**Մասնակցի անվանումը**
1	«Օլանդա» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-10/2» ծածկագրով գնման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.

(Ա. Սահակյան)

2.1 Մասնակցի էլեկտրոնային հայտը էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի.
2.2 Մասնակցի էլեկտրոնային հայտում սույն ընթացակարգի հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:
2.3 Մասնակցի հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են սույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

(Ա. Սահակյան)

3.1 «ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-10/2» ծածկագրով գնման ընթացակարգին գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և սույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան գնային առաջարկ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Չափման միավորը	Քանակը	Նախահաշվային գին ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումը	Արժեք (ՀՀ դրամ)	ԱԱՀ՝ (ՀՀ դրամ)	Ընդհանուր գին (ՀՀ դրամ)
1	Զինվորական մահճակալ	հատ	905	34,390,000	«Օլանդա» ՍՊԸ	27,150,000	5,430,000	32,580,000

3.2 «Օլանդա» ՍՊԸ-ի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը (հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են (ճիշտ են):

3.3 Քանի որ «ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-10/2» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից՝ «Օլանդա» ՍՊԸ-ն, ուստի **19.08.2021**թ. կայացած նիստում գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի և սույն ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.6 ու 8.7 կետերի պահանջները, որոշեց կասեցնել հայտերի բացման և գնահատման նիստը և **24.08.2021**թ. ժամը **12^{30}**-ին ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) առաջարկված գների նվազեցման նպատակով նշված մասնակցի հետ վարել բանակցություններ: Նույն օրը գնահատող հանձնաժողովի քարտուղարը վերոնշյալ մասնակցին էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով ծանուցեց առաջարկված գների նվազեցման շուրջ բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

*Ընդունել ի գիտություն, որ **24.08.2021**թ.-ից հետո կայացած նիստերին գնահատող հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝ ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲ վարչության պետի տեղակալ Ա. Մուրադյանը չի մասնակցել, սակայն էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով վերջինիս կողմից իրականացվել է էլեկտրոնային հայտերի գնահատում:*

3.4 Առաջարկված գների նվազեցման նպատակով **24.08.2021**թ.-ին նախատեսված բանակցություններին «Օլանդա» ՍՊԸ-ն չներկայացավ և վերջինիս գնային առաջարկով ներկայացված գինը մնաց անփոփոխ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկի հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-10/2» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակցին ընտրված ճանաչելու որոշման մասին.

(Ա.Սահակյան)

4.1 **27.08.2021**թ.-ին՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը, գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված գնային առաջարկի հիման վրա «ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-10/2» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված մասնակցին՝ «Օլանդա» ՍՊԸ-ին, հայտարարել ընտրված մասնակից:

4.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-10/2» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

4.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց հրապարակել «ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-10/2» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի արդյունքները:

4.4 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-10/2» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ.

(Ա.Սահակյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ՀԲՄԱՊՁԲ-21-10/2» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

6. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

(Ա.Սահակյան)

6.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Ա. Մուրադյան

Գնահատող Ա. Պապյան

Գնահատող Վ. Մելքոնյան

Գնումները համակարգող Ա. Սահակյան